| 6  | Նշանակել և հրամանագրել դասղեկներ, արտադասարանական վճարովի խմբակների ղեկավարներ:                                                                                                                                                                                                                                     | օգոստոս              | տնօրեն                                          |  |
| 7  | Ստղծել աշխատանքային բարենպաստ պայմաններ վերը նշված կառույցներում աշխատանքները նորմալ կազմակերպելու համար:                                                                                                                                                                                                           | մշտապես              | տնօրեն                                          |  |
| 8  | Ուսումնական մասնաշենքի յուրաժանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:                                                                                                                                                                                                    | մշտապես              | տնօրեն,<br>կրթ. աջ. գծ. տեղ<br>Կազմակերպիչ      |  |
| 9  | Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից՝ <ul style="list-style-type: none"> <li>• Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքերում:</li> <li>• Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը:</li> <li>• Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին:</li> </ul> | մշտապես              | տնօրեն,<br>մասն.<br>աջակցության<br>գծով տեղակալ |  |
| 10 | Սահմանել կարգ 1.3 ուրաքանչյուր աշխատող աշխատանքի ներկայան դասերն սկսելուց 15 րոպե առաջ՝ ըստ «Աշխատանքային ժամանակացույցի»՝ հիմք ընդունելով «Ներքին կարգապահական կանոնները»: Ուսուցիչների հաճախումների հաշվառման պարտականությունները դնել փոխտնօրենի վրա /Գարիկ Սահակյան/                                            | մշտապես              | տնօրեն,<br>փոխտնօրեններ                         |  |
| 11 | Սահմանել վարչասպասարկող անձնակազմի աշխատանքային ռեժիմը: Արտահայտել «Աշխատանքային ժամանակացույցում»:                                                                                                                                                                                                                 | սեպտեմբեր            | տնօրեն                                          |  |
| 12 | Հետևել, որպեսզի դասղեկները և կաբինետի վարիչները պատասխանատվու-                                                                                                                                                                                                                                                      | ուս. տարվա ընթացքում | տնօրեն<br>դասղեկներ                             |  |

|    |                                                                                                                                                       |                   |                                  |  |
|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|----------------------------------|--|
|    | թյուն կրեն գույքի և անվտանգության կանոնների պահպանման համար:                                                                                          |                   |                                  |  |
| 13 | Դպրոցական շենքի պահպանման, տնտեսական կարիքները հոգալու, հակահրդեհային միջոցառումները իրականացնելու պատասխանատվությունը դնել տնտեսվարի վրա:            | մշտապես           | տնօրեն                           |  |
| 14 | Դպրոցական շենքը էլեկտրական հոսանքով ապահովելու, էլեկտրական գծերն ու սարքավորումները անվտանգ պահպանելու պատասխանատվությունը դնել դպրոցի տնտեսվարի վրա: | մշտապես           | տնօրեն                           |  |
| 15 | Դպրոցամերձ հողամասի ծառերի պահպանման և խնամքի աշխատանքները դնել դռնապահի վրա                                                                          | մշտապես           | դռնապահ                          |  |
| 16 | Դասասենյակները, կաբինետները, ուսումնական գույքը և սարքավորումները նախապատրաստել նոր ուստարվան:                                                        | օգոստոս           | տնօրինություն                    |  |
| 17 | Վերանորոգել աշակերտական դասագրքերը:                                                                                                                   | հունիս օգոստոս    | դասղեկներ, գրադարանի վարիչ       |  |
| 18 | Ձևավորել էլեկտրոնային դասամատյանները:                                                                                                                 | օգոստոս           | փոխտնօրեններ                     |  |
| 19 | Անցկացնել տնօրենին կից խորհրդակցություններ յուրաքանչյուր շաբաթ:                                                                                       | շաբաթը մեկ անգամ  | տնօրեն                           |  |
| 20 | Կազմակերպել աշակերտների ինքնակառավարման աշխատանքները ըստ դպրոցի աշակերտական կանոնադրության:                                                           | սեպտեմբեր         | Մաս.կրթ. աջ. գծ. տեղ Կազմակերպիչ |  |
| 21 | Համալրել ուսուցչական կազմը և կատարել դասաբաշխում:                                                                                                     | օգոստոս           | տնօրեն                           |  |
| 22 | Հաշվառել գրադարանային ֆոնդի օգտագործման պիտանի դասագրքերը:                                                                                            | հունիս            | գրադարանի վարիչ                  |  |
| 23 | Օգտագործման ենթակա դասագրքերը վարձույթով տալ ծնողներին, այդ նպատակի համար մշակել գիրքը վարձույթով ծնողին տալու համապատասխան պայմանագիր:               | օգոստոս սեպտեմբեր | գրադարանի վարիչ                  |  |
| 24 | Դասղեկների հետ վերջնա-                                                                                                                                | սեպտեմբեր         | Մաս.կրթ. աջ. գծ.                 |  |

|    |                                                                                                                                                                                                                                                                                                               |                            |                                 |  |
|----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------|---------------------------------|--|
|    | կանապես ճշտել սոցիալապես անապահով, որբ և միակողմանի ծնողազուրկ երեխանների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:                                                                                                                                                                  |                            | տեղ դասղեկ, ծնողխորհրդի նախագահ |  |
| 25 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ ամառային առաջադրանքների հետ, ժամանակին և կազմակերպված ընդունել ամառային առաջադրանքները:                                                                                                                                                                               | 10.08-20.08<br>20.08-31.08 | փոխտնօրեն                       |  |
| 26 | Դպրոցական շենքը նախապատրաստել նոր ուսումնական տարվան:                                                                                                                                                                                                                                                         | 20.08-31.08                | տնօրեն,<br>տնտեսվար             |  |
|    | Նշանակել ավագ հերթապահներ, պահանջել հերթապահներից <ul style="list-style-type: none"> <li>• Հսկել և իրականացնել օրվա հերթապահությունը ուսումնական մասնաշենքում</li> <li>• Կազմակերպել տվյալ օրվա ուսումնական ողջ գործընթացը</li> <li>• Օրվա վերջում աշխատանքային գործընթացի մասին զեկուցել տնօրենին</li> </ul> | մշտական                    | Մաս.աջակ .գծով փոխտնօրեն        |  |



**ՀՀ ԿԳՄՄՆ «Ապարանի ֆիզմաթ ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենի 2022-2023 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան ԲԱԺԻՆ 1**

**Որակի բարձրացում կրթության ապահովում**

**Հիմնախնդիրներ**

- Պարտադիր ուսուցման ապահովում
- Սովորողների կարողությունների և հմտությունների արժեքային համակարգի ձևավորումը
- Սովորողների ուսումնական գործունեություն կազմակերպում

**Խնդիրները**

- Բարձրացնել դասղեկների ուսուցիչների և ծնողների համագործակցության արդյունավետությունը
- Բարձրացնել սովորողների հետաքրքրությունների աստիճանը ուսումնական գործընթացների հանդեպ
- Զարգացնել աշակերտների ուսումնական առարկանների նկատմամբ ճանաչողական հետաքրքրությունները
- Օժտված սովորողների շրջանում ապահովել հետազոտական գործունեության կազմակերպումը
- Սովորողների ստեղծագործական հնարավորությունների ներուժի զարգացման համար ապահովել անհրաժեշտ պայմաններ:

**Պարտադիր կրթության կենսագործում**

| № | Աշխատանքի բովանդակությունը                                                                                                                         | Կատարման ժամկետը   | Պատասխանատու                | Ծանոթություն |
|---|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------------------|--------------|
| 1 | 2                                                                                                                                                  | 3                  | 4                           | 5            |
| 1 | Ավագ դպրոցում աշակերտների ընդունելությունը իրականացնելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծել աշխատող մանկավարժների խորհրդատվական խումբ:          | օգոստոս            | Տնօրեն, փոխտնօրեններ        |              |
| 2 | Կոմպլեկտավորել դպրոցի հոսքային դասարանները, երեխաներին ծանոթացնել դպրոցին և կարգապահական կանոններին և կովիդ 19-ով պայմանավորված նորմերի պահպանմանը | օգոստոս            | տնօրենություն               |              |
| 3 | Ուշադրության կենտրոնում պահել պահել առավել աչքի ընկնող և                                                                                           | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, փոխտնօրեն դասղեկներ |              |

|   |                                                                                                                                                 |           |                            |  |
|---|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|----------------------------|--|
|   | դասերից ետ մնացող աշակերտներին այն հաշվով, որ բոլորն էլ ընդգրկվեն դայչոց:                                                                       |           |                            |  |
| 4 | Ապահովել սովորողների մասնակցությունը առարկայական օլիմպիադաններին                                                                                | Դեկտեմբեր | Ուսումնական զծով փոխտնօրեն |  |
| 5 | Ուսման և հասարակական աշխատանքներում առանձնահատուկ հաջողություն ունեցող սեվորողների խրախուսում <<Տարվա լավագույն աշակերտ>> մրցույթի կազմակերպում | մայիս     | Տնօրենություն աշխորհուրդ   |  |
| 6 | Ստուգատես մրցույթ <<Տարվա լավագույն աշակերտուհի>>                                                                                               | մայիս     | Տնօրենություն աշխորհուրդ   |  |

**Աշխատանք մարկավարժական կադրերի հետ  
Որակավորման բարձրացում  
ԲԱԺԻՆ 2**

**Մասնագիտության իրազեկության բարձրացում**

**Հիմնախնդիրներ**

- Ուսուցիչներին մեթոդական օգնություն և մասնագիտացման զարգացման ապահովվում
- Մանկավարժների մասնագիտական հմտությունների և կարողությունների բարելավում
- Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և ուսուցման ինտերակտիվ մեթոդների ներդրում ուսուցման գործընթացում
- Մանկավարժական փորձի ուսումնասիրում, լուսաբանում մանկավարժների կողմից վարպետության դասերի և սեմինարների կազմակերպում:

**Խնդիրները**

- Ցուցաբերել գործնական օգնություն ուսուցիչների հատկապես երիտասարդ մասնագետներին
- Ակտիվացնել մանկավարժների հետազոտական գործունեությանն ուղղված աշխատանքները
- Ներդնել կրթական գործընթացում ուսուցման ինտերակտիվ մեթոդներ և ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ
- Մասնագիտական օժանդակություն տրամադրել տարակարգի համար դիմող ուսուցիչներին::

| № | Աշխատանքի բովանդակությունը                         | Կատարման ժամկետը  | Պատասխանատու  | Ծանոթություն |
|---|----------------------------------------------------|-------------------|---------------|--------------|
| 1 | 2                                                  | 3                 | 4             | 5            |
| 1 | Աշխատողներին, ծնողներին և սովորողներին ներկայացնել | Օգոստոս ընթացքում | տնօրենություն |              |

|   |                                                                                                                                                                                                                                                                           |                   |                                              |  |
|---|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------|----------------------------------------------|--|
|   | Կովիդ -19 –ի պահանջները և խիստ ուշադրություն դարձնել անձնական հիգիենային                                                                                                                                                                                                  |                   |                                              |  |
| 2 | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեություն՝ հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:          | օգոստոս           | տնօրեն,<br>փոխտնօրեններ                      |  |
|   | ա/ Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամաքանակի տնօրինման վեր-աբերյալ առաջարկությունների ներկայացում,                                                                                                                                      | օգոստոս           | ու.ս. գծով<br>փոխտնօրեն                      |  |
|   | բ/Մտուզել ուսուցիչներին առարկայական թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն /գրավոր/ տնօրինությանը:                         | սեպտեմբերի 1-10   | ու.ս. գծով<br>փոխտնօրեն                      |  |
| 3 | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին այն հարստացնել մեթոդական մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:                                                                                                                               | Օգոստոս-սեպտեմբեր | Ու.ս.գծով<br>փոխտնօրեն<br>Գրադարանի<br>վարիչ |  |
| 4 | Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ. անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել | ամիսը մեկ անգամ   | տնօրեն,<br>փոխտնօրեններ                      |  |

|   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                    |                                                           |  |
|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------------------------------------------------|--|
|   | մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |                    |                                                           |  |
| 5 | Գրադարանում ստեղծել մեթոդական բաժին, այն հարստացնել մեթոդական, մասնագիտական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով:                                                                                                                                                                                                                                                                                                                                | օգոստոս-սեպտեմբեր  | ուս. գծով փոխտնօրեն, գրադարանի վարիչ                      |  |
| 6 | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական 13-16 ժամ /տնօրեն՝ 4-5, փոխտնօրեններ՝ 7-8, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3/: Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով դիտողություններ հանձնարարություններ: Դիտողություններն ու հանձնարարությունները գրանցել ուսուցչի աշխատանքային գործունեությունը բնութագրելու համար հատկացված Դիտողությունների և առաջարկությունների գրանցման մատյանում:                                | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ և մասնախմբերի նախագահներ:            |  |
| 7 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ, առարկայական մասնախմբերի նախագահներ          |  |
| 8 | Ապահովել ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման 10 միավորանի սանդղակի անցման մեթոդական ցուցումների կիրառումը: Անհրաժեշտության դեպքում ստեղծել թեմատիկ հարցաշարեր / հարցաշարերի բանկ/ և հաճախ 10-12-րդ դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև համակարգիչների միջոցով: Կիսամյակի ընթացքում ավագ դպրոցում առնվազն երկու անգամ բոլոր առարկաններից կազմակերպել թեմատիկ ստուգումներ՝ տնօրինության ներկայացուցչի կամ առարկայական մասնախմբի նախագահի մասնակցությամբ: | ուստարվա ընթացքում | տնօրինություն, առարկայական մասնախմբի նախագահ, ուսուցիչներ |  |
| 9 | Հարստացնել դպրոցի լաբորա-                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | ուստարվա           | ուստարվա                                                  |  |

|    |                                                                                                                                                                                                                                                                                 |                     |                                                                         |  |
|----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------|-------------------------------------------------------------------------|--|
|    | տորիանները: Հետևել, որպեսզի դասը հազեցված լինի զանազան ուսումնադիտողական նյութերով, լաբորատոր սարքավորումներով՝ կարևորելով տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառումը:                                                                                                  | ընթացքում           | ընթացքում                                                               |  |
| 10 | Բարձր դասարաններում պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործնական կոնֆերանսներ և այլն, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը:                                                                              | ուստարվա ընթացքում  | փոխտնօրեններ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ հեզերան սոց մանկավարժ |  |
| 11 | Ուսումնասիրել հմուտ ուսուցիչների առաջավոր փորձը և տարածել դպրոցում: Այն իրականացնել Հետազոտա-կան դպրոց, մանկավարժական լաբորատորիա՝ ներդպրոցա-կան միավորման անդամների և առարկայական միավորումների նախագահների միջոցով:                                                           | մշտապես             | տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն                                             |  |
| 12 | Ստեղծել առաջավոր փորձի դպրոցներ, փնջային մեթոդ միավորումներ, ընդգրկել ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ մարզի դպրոցների մանկավարժներին: Այս գործում ակնկալել մարզային կրթության վարչության և ԿԱԻ մարզային մասնաճյուղի աշխատակիցների օժանդակությունը և մասնակցությունը: | ուս.տարվա ընթացքում | տնօրինություն                                                           |  |
| 13 | Մանկավարժական խորհրդում կարդացվելիք զեկուցումներ /նշել թեմաների վերնագրերը, ժամկետը և պատասխանատուի անունը/: Առնվազն 5-6 զեկուցում:                                                                                                                                             | ուստարվա ընթացքում  | տնօրեն փոխտնօրեններ ուսուցիչներ                                         |  |
| 14 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ աշակերտներին քննությունների նախապատրաստելու համար:                                                                                                                                                                                      | մայիս               | տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն                                             |  |
| 15 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը քննությունները սկսվելուց առնվազն 10 օր                                                                                                                                                        | մայիս               | տնօրեն, ուս. գծով փոխտնօրեն                                             |  |

|    |                                                                                                                                                                                                                                                                                                                            |                    |                                                        |  |
|----|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------------------------------------------|--|
|    | առաջ:                                                                                                                                                                                                                                                                                                                      |                    |                                                        |  |
| 16 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:                                                                                                                                                                                                                                       | ընթացքում          | տնօրինություն                                          |  |
| 17 | Յուրաքանչյուր առարկայական մասնախմբերից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը. արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ առարկայական մասնախմբում՝ տալով համապատասխան գնահատական: Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող պահանջները: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ                                           |  |
| 18 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ 12-րդ դասարանների աշակերտներին քննություններին նախապատրաստելու համար                                                                                                                                                                                                               | մայիս              | Տնօրեն ուս.գծով փոխտնօրեն                              |  |
| 19 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները փակցնել քննական կարգացուցակը՝ քննությունները սկսելուց առնվազն 10 օր առաջ:                                                                                                                                                                                              | մայիս              | Տնօրեն ուս.գծով փոխտնօրեն                              |  |
| 20 | Աջակցել ատեստավորման անցած ուսուցիչներին տարակարգեր ստանալու գործում:                                                                                                                                                                                                                                                      | Ուստարվա ընթացքում | Տնօրեն փոխտնօրեններ, համապատասխան մասնախմբի ղեկավարներ |  |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԲԱԺԻՆ 3

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը  
Հիմնախնդիրները

- Համաճարակային իրավիճակներում ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում:

- Ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավում:

- Դաստիարակչական աշխատանքների համակարգում:
- Արտադասարանական աշխատանքների փորձի ընդհանարացում:
- <<Ուսուցիչ-աշակերտ-ծնող>> կապի ապահովում:
- Սովորողների արժեքային համակարգի բարելավում:

Խնդիրները

- Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպում:
- Ապահովել աշակերտների մասնակցությունը դասապրոցեսին, պլանավորման և գնահատման գործում:
- Դասղեկների աշխատանքի փորձի ընդհանարացում:
- Երեխաների դաստիարակության մեջ հաջողություն ունեցող ընտանիքների ներկայացուցիչների հետ հանդիպում:

| № | Աշխատանքի բովանդակությունը                                                                                       | Կատարման ժամկետը         | Պատասխանատու                         | Ծանոթություն |
|---|------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------|--------------------------------------|--------------|
| 1 | 2                                                                                                                | 3                        | 4                                    | 5            |
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով :                 | օգոստոս                  | փոխտնօրեններ, առարկայական մասնախմբեր |              |
| 2 | Հաստատել և գործունեության մեջ դնել<br>ա) դասացուցակը<br>բ) աշակերտների և ուսուցիչների հերթապահության գրաֆիկները: | 30.08.2022<br>10.09.2022 | տնօրեն և փոխտնօրեններ                |              |
| 3 | Ժամանակին ուսուցիչներին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով:                  | օգոստոս                  | փոխտնօրեններ, մ/մ անդամներ           |              |
| 4 | Ստեղծել Մասնագիտական զարգացման դպրոց՝ աշա-կերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ                               | ուստարվա ընթացքում       |                                      |              |

|   |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                    |                                                                                                  |  |
|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------------------------------------------------------------------------------------|--|
|   | նպատակառոտորեն<br>համար:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |                    |                                                                                                  |  |
| 5 | Մովորողների կրթության որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող՝ Դիտողությունների և առաջարկությունների գրանցման մատյանում:                                                                                                                                                                                                | ուստարվա ընթացքում | տնօրեն,<br>ու.ս. գծով<br>փոխտնօրեն                                                               |  |
| 6 | Կատարել առարկայական ուսումնասիրություններ. արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել՝<br>ա/ առարկայի դրվածք /10-12-րդ դասարաններում/<br>բ/ ՏՀՏ-ի օգտագործում դասերին<br>գ/ նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացում դ/հոսքային դասարանների խորացված առարկաների դրվածքի ուսումնասիրում, ե/ուսուցիչների աշխատանքների համեմատությունների անցկացում, | ուստարվա ընթացքում | տնօրեն,<br>ու.ս. գծով<br>փոխտնօրեն<br><br>տնօրեն,<br>փոխտնօրեններ,<br>մասնախմբերի<br>նախագահն »ճ |  |
| 7 | Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների ծրագրային պահանջների կատարման ընթացքը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         | դեկտեմբեր մայիս    | փոխտնօրեններ                                                                                     |  |



|    |                                                                                                                                                                                                             |                    |                                                           |  |
|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|-----------------------------------------------------------|--|
|    | բնագիտական առարկաներից                                                                                                                                                                                      |                    |                                                           |  |
| 8  | Կազմակերպել առարկայական շաբաթներ, միամսյակներ: Առարկայական միամսյակներին ա/կազմակերպել ցերեկոյթներ, բաց դասեր, բ/ լույս ընծայել պատի թերթեր, գ/ հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից: | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ         |  |
| 9  | Հայտնաբերել օժտված երե-խանների, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի:                                                                                   | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ, մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ |  |
| 10 | Հիմք ընդունելով աշակերտների ցանկությունը և ծնողների համաձայնությունը՝ կազմա-կերպել նախասիրական պարամունքներ տարբեր առարկան-ներից՝ կնքելով ծնողների հետ համապատասխան պայմանագիր:                             | ուստարվա ընթացքում | տնօրեն, փոխտնօրեններ                                      |  |
|    | <b>ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</b>                                                                                                                                                                                  |                    |                                                           |  |
| 1  | Կիսամյակը 1-2 անգամ հրա-վիրել դասարանական ծնողա-կան ժողովներ: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժա-կան թեմաներով զեկուցումներ                                | ուստարվա ընթացքում | փոխտնօրեններ, դասղեկներ,                                  |  |
| 2  | Կազմակերպել                                                                                                                                                                                                 |                    |                                                           |  |

|          |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                                                                                          |                                       |  |
|----------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------|--|
|          | <p>դասղեկների տեղեկատվական խորհրդակցություններ:</p> <p>Կազմակերպել սեմինարներ հետևյալ թեմաներով.</p> <ul style="list-style-type: none"> <li>• &lt;&lt;Դասղեկի փաստաթղթերը&gt;&gt;</li> <li>• &lt;&lt;Դասղեկի ժամի դաստիարակչական դերը&gt;&gt;</li> <li>• &lt;&lt;Դասղեկի ժամի բովանդակությունն ու վարման մեթոդները&gt;&gt;</li> <li>• &lt;&lt;Ծնողական ժողովի բովանդակությունը, վարման ձևերն ու մեթոդները&gt;&gt;</li> </ul> | <p>օգոստոս</p> <p>սեպտեմբեր</p> <p>կիսամյակը մեկ անգամ</p> <p>օգոստոս</p> <p>օգոստոս</p> | <p>տնօրենություն</p> <p>դասղեկներ</p> |  |
| <p>3</p> | <p>Ավանդական միջոցառումներ.</p> <p>&lt;&lt;Լավագույն աշակերտ, աշակերտուհի&gt;&gt; մրցույթի ասանցկացում</p> <p>&lt;&lt;Լավագույն աշակերտ, աշակերտուհի&gt;&gt; մրցույթի արդյունքների ամփոփում:</p>                                                                                                                                                                                                                             | <p>սեպտեմբեր</p> <p>մայիս</p>                                                            | <p>փոխտնօրեններ</p> <p>դասղեկներ</p>  |  |

**ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԲԱԺԻՆ 4**

Մասնագիտության իրազեկության բարձրացում

Հիմնախնդիրներ

- Մանկավարժների մասնագիտական գործունեության, ստեղծագործական աշխատանքների համար անհրաժեշտ պայմանների ապահովում
- Մանկավարժական անձնակազմի միասնության ապահովում, թիմի ձևավորում

- Մեթոդամանկավարժական աջակցություն մանկավարժական աշխատողներին
- Մանկավարժական անձնակազմի գործունեության մեջ արմիութենական կազմակերպության դերի բարձրացում:

**Խնդիրները**

- Մեթոդամանկավարժական օգնության կազմակերպում
- Արմիութենական կազմակերպության դերի բարձրացում մանկավարժական անձնակազմի գործունեության մեջ:
- Դասուղեկ ուսուցիչ փոխհարաբերության ամրապնդում

| № | Աշխատանքի բովանդակությունը                                                                                                                                                                                                                         | Կատարման ժամկետը   | Պատասխանատու                                          | Ծանոթություն |
|---|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------|-------------------------------------------------------|--------------|
| 1 | 2                                                                                                                                                                                                                                                  | 3                  | 4                                                     | 5            |
| 1 | Ուսումնական տարվա սկզբից ունենալ ուսուցիչների բացակայությունների հաշվառման մատյան:                                                                                                                                                                 | ուստարվա ընթացքում | ու.ս. գծով փոխտնօրեն                                  |              |
| 2 | Հետևել, որ դասաժամերին բացթողումները լրացվեն լրացուցիչ պարապմունքների միջոցով:                                                                                                                                                                     | մշտապես            | ու.ս. գծով փոխտնօրեն                                  |              |
| 3 | Ստուգել և հաստատել ծրագրային նյութերի թեմատիկ պլանավորումները:                                                                                                                                                                                     | սեպտեմբերի սկիզբ   | տնօրեն ,<br>ու.ս. գծով փոխտնօրեն                      |              |
| 4 | ա/ Ավարտական դասարանների գիտելիքներին, կարողություններին ծանոթանալու նպատակով տարեկան 2 անգամ անցկացնել ստուգողական գրավոր աշխատանքներ:<br>բ/ Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերում և մանկավարժական խորհրդի նիստում: | դեկտեմբեր ապրիլ    | տնօրեն,<br>ու.ս. գծով փոխտնօրեն,<br>մասնախմբի նախագահ |              |
| 5 | Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարման վիճակը բնագիտական առարկաներից:                                                                                                                                                                 | հոկտեմբեր ապրիլ    | ու.ս. գծով փոխտնօրեն                                  |              |
| 6 | Ստուգել տարբեր առարկաներից տրված ուսուցողական և ստուգողական աշխատանքները:                                                                                                                                                                          | կիսամյակի վերջում  | փոխտնօրեններ<br>մասնախմբերի<br>ղեկավարներ             |              |

|    |                                                                                                                                                                                                                                                                          |                        |                                             |  |
|----|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|---------------------------------------------|--|
|    | տանքների քանակը և որակը: Արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստում:                                                                                                                                                                                            |                        |                                             |  |
| 7  | Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը և արդյունքները քննարկել տնօրինության ընդլայնված նիստերում:                                                                                                                                                                     | դեկտեմբեր ապրիլի սկիզբ | տնօրեն, փոխտնօրեններ մասնախմբերի ղեկավարներ |  |
| 8  | Ստուգել դասամատյանների, աշակերտական օրագրերի ու տետրերի վարման վիճակը:                                                                                                                                                                                                   | շաբաթը մեկ             | ու.ս. գծով փոխտնօրեն, դասղեկներ             |  |
| 9  | Գիտելիքների ստուգում կազմակերպել միջին դպրոցում 10-րդ դասարանում:                                                                                                                                                                                                        | դեկտեմբեր ապրիլ        | փոխտնօրեններ                                |  |
